ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի
N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ N 2-Ն ՈՐՈՇՄԱՄԲ

ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔ
2016 Թ.

Ներածություն

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի

ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադրաձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպման անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստկատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի աշխատակիցներին:

Շնորհակալություն Ձեզ, հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա

հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Լեռնամերձ համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում՝ հիմնական դպրոցում, բուժ-ամբուլատորիայում, առևտրի սպասարկման օբյեկտներում:

Համայնքում 2017-21թթ. նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են. համայնքի թաղամասերի փողոցային լուսավորության անցկացում, փողոցների փոսալցում, կանգառների պատրաստում, ոռոգման ջրերի ներքին ցանցերի նորոգում:

Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվի յուրաքանչյուրը, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակութային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց անձնական բարօրությանը, այնպես էլ ազգի ու հայրենիքի հզորացմանը:

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցություն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, բուժամբուլատորիայի աշխատակազմերն ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն

Համայնքի ղեկավար՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է հնգամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

3. Ընտրանքային բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական ցուցանիշները
6. Գյուղատնտեսական ցուցանիշները

Հավելված -1. Համայնքի ղեկավարի կառուցվածքը
Հաշվետվություն հանդիսացող գույքի ցանկը

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքն ունի երկար տարիների պատմություն:Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 900մ բարձրության վրա; Լեռնամերձ գյուղը գտնվում է Ամբերդ գետի ափին; Գյուղը սահմանակից է Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղի և 5-րդ սովխոզի հետ; Գյուղի ծայրամասում է վերջանում Աշտարակի ձորը; Արմավիրի մարզից գյուղը սահմանակից է Ամբերդ և Աղավնատուն գյուղերի հետ;

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ապրում են 519 բնակիչներ, որոից 292 տղամարդ 227 կանայք:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ (0- 5 տ)	24
2. դպրոցական (7-17 տ)	79
3. 18- 62 տարեկան	308
4. թոշակառուներ	48
5. մանկուց հաշմանդամներ	2
6. աշխատունակներ	295

Գյուղն ունի 101 տնտեսություն, որոնցից 26- ն ընդգրկված են ընտանեկան նպաստի համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի (համայնքապետի) և ավագանու կողմից, որոնք ընտրվում են հինգ տարին մեկ անգամ: Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

- համայնքի ղեկավար ----- 1 դրույք
- տեղակալ ----- 1 դրույք
- աշխատակազմի քարտուղար 2.1-1 ----- 1 դրույք
- առաջատար մասնագետ 3.1-1 ----- 1 դրույք
- 1-ին կարգի մասնագետ 3.2-1 ----- 1 դրույ
- հավաքարար ----- 1 դրույք
- պահակ ----- 1 դրույք

Աշխատակազմի ամբողջ ապարատը բաղկացած է 7 անձից: Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.-ի թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով (տե՛ս հավելված 2)՝

ջրմուղի ցանց

- ոռոգման ցանց
- հուշարձան

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի:

Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 5 կմ ճանապարհ և փողոցներ:

Ոռոգման ջրի ներքին ցանցի մի մասը այժմ հողային ջրատարներով են: Հարկավոր է փոխարինել կիսախողովակներով, որպիսզի ջուրը անխափան հասնի ջրօգտագործողներին:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աղբահանությունը համայնքում կատարվում է շաբաթը մեկ օր:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 101 բնակելի տուն, 15400 հազար քմ. տարածքով: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 42-ից ավելի է, որը տարեցտարի աճում է: Կան կիսակառույց շենքեր որոնք միջոցների սղության պատճառով չեն կառուցվում:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- Համայնքի վարչական տարածք 166,32 հա

Գյուղատնտեսական
- Վարելահողեր 70,97 հա

- Բազմամյա տնկարքներ ընդամենը 2,72 հա
- Որից՝ պտղատու այգիներ 2,72 ահ
- արոտ 14,54 հա
- Այլ հողատեսքեր 6,21 հա
- Ընդամենը 94,44 հա

Բնակավայրի
- Բնակելի կառուղապատման 34,13 հա
- Այդ թվում տնամերձ 34,13 հա
- Հասարակական կառույց 6,8 հա
- Որից համայնքային 0.15 հա
- Պետական 0,65 հա
- Ընդհանուր օգտագործման (համայնքային) 7,85 հա
- Այլ հողեր (համայնքային) 0,03 հա
- Ընդամենը 42,81

Արդյունաբերական, ընդերքօգտագործման
- Արդյունաբերական (համայնքային)
- Գյուղատնտեսական արտադրական (համայնքային) 15,32 հա
- Ընդամենը 15,32 հա

Էներգետիկայի, տրանսպորտի և կոմունալ
- Տրանսպորտի (պետական) 1,52 հա
- Ընդամենը 1.52 հա

Հատուկ պահպանվող տարածքներ
- Պատմամշակույթային 12,21 հա
- Որից համայնքային 0,39 հա
- Պետական 11,82 հա
- Ընդամենը 12,21 հա

Ջրային

- Գետեր (պետական)
- Ջրամբարներ (համայնքային)
- Լճեր (համայնքային)
- Ջրանցքներ (պետական) 0,02 հա
- Ջրային այլ օբյեկտներ (պետական)
- Ընդամենը 0,02 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում հիմնականում զբաղվում են այգեգործությամբ, հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի, թարխունի, ելակի արտադրությամբ նաև անասնապահությամբ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղը ունի մեկ հիմնական դպրոց, Դպրոցը վերանորոգված չէ և ջեռուցվում է վառելանյութով: Սովորում են շուրջ 27 աշակերտ և մեկ ուսուցչին ընկնում է 2 աշակերտ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի մեկ բուժկետ, որը գործում է մասնավոր շենքում/պայմանագրային պայմանով/ և վերանորոգված է: Բուժկետում աշխատում են մեկ բուժքույր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի բնակիչների կյանքը բարեփոխումների միջոցով դարձնել ավելի լավը: Նրանց սոցիալական, մշակույթային և հոգևոր պայմանները բարձրացնել և դարձնել ավելի բարեկարգ: 2017-2021 թվականներին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Կազմակերպել համայնքի բնակչության մշակույթային կյանքը և հանգիստը ոչ աշխատանքային ժամերին.
2. Համայնքի ներքին փողոցների գիշերային լուսավորություններ.

3. Համայնքի ոռոգման ջրատարի վերանորոգում
4. Գյուղտեխնիկայի ձեռք բերում

5. Համայնքում կառուցել գյուղմթերքների վերամշակման արտադրամաս
6. Համայնքում կառուցել չրանոցներ
7. Կայացնել արդյունավետ գյուղատնտեսություն
8. Ապահովել համայնքի մաքրությունը /մշտական աղբահանություն/

2.1 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ /հազ.դրամ/

	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		պլան	կատարող.
1.	Հողի հարկ	655,2	410,7
2.	Գույքահարկ	470,0	507,5
3.	Տեղական տուրք	50,0	52,8
4.	Այլ եկամուտներ	-	
5.	Հողի վարձակալության վճար	196,0	90,7
6.	Գույքի վարձակալության վճար	-	-
7.	Ծառայությունների մատ. վճարներ	360,0	260,7
8.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	9513,7	9513,7
9.	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյոջեին տրամադրվող այլ դոտացիա	-	-
10.	Տարեսկզբի ազատմնացորդ	300,6	300,6
11.	Հողի օտարումից եկամուտ	-	-
	Ընդամենը	11545,5	11136,7

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 76,4տոկոս;

հ/հ	Հիմնարկներ	Տարեկան	
		պլան	կատարող.
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	10884,9	10465,1
2	Հանգիստ,մշակույթ և կրոն	-	-

3	Սոցիալական պաշտպանություն	-	-
4	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	-	-
5	Նախադպրոցական կրթություն	-	-
6	Աղբահանում	360,0	360,0
7	Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակ.	-	-
8	Վարչական սարքավորումներ	300,6	300,6
9	Կապիտալ նորոգումների ծախսեր	-	-
10	Շենքերի և շին. կառուցում	-	-
11	Այլ ակտիվների ձեռքբերում		
	Ընդամենը	11545,5	11125,7

2.2. Համայնքում իրականացվող ծրագրեր

Լեռնամերձ համայնքի տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն:

Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ, գալիք հինգ տարիների համար, նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր:

Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ:

Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը խթան կհանդիսանա համայնքի զարգացման համար /սակայն դեռևս այն նախատեսված չէ/:

2.3. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր

N	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը /հազ.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները					Պատասխանատու
				համայնքի վարչության	դրամաշնորհ	այլ աղբյուրներ/ պետական բյուջե/	2017թ. ծավալը ֆինանսական միջոց	2018թ. ծավալը ֆինանսական միջոց	2019թ. ծավալը ֆինանսական միջոց	2020թ. ծավալը ֆինանսական միջոց	2021թ. ծավալը ֆինանսական միջոց	
1.	Համայնքի փողոցների գիշերային լուսավորության անցկացում /մ/	500,00	1050,0	1050,0	-	-	-	200,0	200,0	300,0	350,0	համայնքի վարչություն
2.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում՝ փոսա-լցում /քառ.մ/	400,00	600,0	600,0	-	-	-	100,0	150,0	150,0	200,0	համայնքի վարչություն
3.	Աջակցություն ներհամայնքային՝ ոռոգման ջրատարի վերանորոգման/	150,0		450,0			-	100,0	100,0	100,0	150,0	համայնքի վարչություն
4	Կանգառների կառուցում	20	250,0	250,0			-	-	100,0	150,0	-	համայնքի վարչություն

2.4. Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Լեռնամերձ համայնքի սոցիալ –տնտեսական զարգացման համար խոչնդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

Համայնքում կա պտղատու այգիների զարգացման տեսանկյունից, սակայն չկան մրգի չորանոց և պահածոների արտադրամաս, որը խթան կհանդիսանա համայնքում զարգացնելու այգեգործությունը և բանջարանոցային կուլտուրաների զարգացումը, ինչպես նաև վերորգյալ արտադրամասերի առկայության դեպքում կբացվի այլընտրանքային աշխատատեղեր:

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանության գործընթացը, ավելի նպատակային, կազմակերպելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար՝ համայնքի ընտանիքներում յուրաքանչյուր ծնվածների, մահացածների, հիվանդությունների դեպքում կցուցաբերվեր դրամական օգնություն: Հենաշարժական խնդիրներ ունեցող բնակիչներին համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովելու համար ունենալ միջոցներ: Համայնքում ուսումնական հաստատությունների, խանութների, բուժ ամբուլատորիայի, մշակույթի տան, հասարակական օբյեկտների մուտքերը հարմարեցնել հաշմանդամության սայլակներին համապատասխան: Նման միջոցառումները կնպաստեն հաշմանդամների մասնակցությանը հասարակական կյանքում:

Համայնքում անհրաժեշտություն է կանգառների պատրաստումը, նոր այգիների հիմնումը, աղբահանության հաճախակիացումը, համայնքատիրության ստեղծումը, համայնքային գերեզմանատների պահպանումը՝ ցանկապատումը, բարեկարգումը, կանաչ ապատումը, որոնց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ տեխնիկա և տրանսպորտային միջոցներ:

Ոռոգման ջրատարի ներհամայնքային համակարգի մի մասը բետոնյա կիսախողովակներ են, մյուս մասը՝ հողային հունով առուներ, որի պատճառով ունենում ենք ոռոգման ջրի կորուստ, հետևապես ստացվում է մշակաբույսերի անարդյունավետաճեցում, բերքատվության կորուստ:

Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական մասհանումներ:

Համայնքում յուրաքանչյուրի համամարդկային արժեքների ազատ և անկաշկանդ հաղորդակցման համար անհրաժեշտ է մշակութային միջոցառումների քանակական և որակական ավելացումը՝ ֆինանսական հնարավորության դեպքում:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում:

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
• Համայնքը գտնվում է	• Գյուղատնտեսությամբ

մարզկենտրոնից 35 կմ՝ Էջմիածնից 15կմ՝ և Երևանից 35 կմ հեռավորության վրա: • Համայնքի կողքով անցնում է Ամբերդ գետը որին միանում է Քասախ գետին համայնքը ունի ոռոգման մշտական ջուր տարվաբոլոր եղանակներում, որը մեծ հնարավորություն է տալիս համայնքում զարգացնել ույգեգործությունը և գյուղատնտեսությունը	զբաղվելը դարձել է անեկամտաբեր, որի պատճառով արտագնայա աշխատանքի մեկնողների թիվը մեծանում է: • Գործազրկություն • Անմխիթար վիճակում են ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհները: • Համայնքը չունի գյուղ տեխնիկա և նյութատեխնիկական բազա գյուղատնտեսությամբ զբաղվողներին օժանդակելու համար: • Համայնքում չկամրգի չորանոց և գյուղմթերքների վերամշակման արտադրամաս • Արոտավայրի բացակայություն • Ոռոգման ներքին ցանցի անմխիթար վիճակ • Էլեկտրական ցանցի անմխիթար վիճակ
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
• Անասնապահության զարգացում • Մեծ աշխատուժի առկայություն • Ջերմոցային տնտեսությունների զարգացում • Գյուղմթերքների արտադրամասերի և մրգերի չորանոցի կառուցում	• Գյուղմթերքի և պտղի մթերման դժվարություններ • Հանրապետությունից բացակայող բնակիչների թվի մեծացում: • Հողերի բերրիության անկում • Այլընտրանքային աշխատատեղերի բացակայություն

3.Համայնքի նպատակների սահմանումն գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Լեռնամերձ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում համայնքը անհայտ

ներդրողների հետ համագործակցությամբ կունենա գյուղմթերքների վերամշակման արտադրամասի և մրգերի չորացման արտադրամաս, նշված աշխատանքների կատարման համար կներդրվի 50000000 Հայաստանի Հանրապետության դրամ, արդյունքում կստեղծվի աշխատատեղեր: Համայնքը կսկսի կայուն զարգանալ, յուրաքանչյուր աշխատող կստանա 110000 Հայաստանի Հանրապետության դրամ: Կավելանա բնակիչների իրական եկամուտները կկրճատվի աղքատությունը:

Համայնքի փողոցների և գիշերային լուսավորության անցկացման, ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, ներհամայնքային ոռոգման ջրատարի նորոգման համար համայնքի բյուջեից կծախսվի 2,35մլն դրամ: Ցուցանիշների արժեքները սահմանվել են տարեկան կտրվածքով:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 10%-ի աճ, իսկ ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա 25%-ով:

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին՝ 20%:

Համայնքի սեփական եկամուտների աճը՝ 5%:

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	15%	14%	13%	11%	9%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	0.7%	0.8%	0.9 %	1.0 %	1.2%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0.5%	0.5%	0.5%	0.5%	0.5%

Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1

«Փողոցների գիշերային լուսավորության անցկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	200000	200000	300000	350000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	100000	100000	150000	150000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	100000	100000	150000	200000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. լամպերի ձեռքբերում 1.2 Լարերի, մալուխների ձեռքբերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Մոնտաժման աշխատանքներ 2.2 Անցկացված լուսավորության փորձարկում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1050000,0 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1050000, դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում նոր թաղամասերի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության անցկացման արդյունքում այդի փողոցները կլուսավորվեն, կակտիվանա, կհեշտանա բնակչության տելաշարժը գիշերային ժամերին, գույքի պահպանությունը կբարելավվի, կբարձրանա բնակչության տրամադրությունը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2

«Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում»

(ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	ճանապարհների և փողոցների բարեկարգում, փոսալցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելանետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	100000	150000	150000	200000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	50000	100000	50000	100000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	50000	50000	100000	100000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Ձյութի, մանրահատակի, ավազի ձեռքբերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում, ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 600000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 600000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	ճանապարհների և փողոցների բարեկարգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները դպրոց.. Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետկլինի. բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3

«Կանգառների պատրաստում, տեղադրում»

(ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Կանգառների պատրաստում, տեղադրում

Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	-	100000	150000	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	-	50000	100000	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	-	50000	50000	-
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Խոդովակների ձեռքբերում 1.2. Տեխնիկայի կարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 քարի ձեռքբերում 2.2 թիթեղների ձեռքբերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 250000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 250000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Կանգառների պատրաստում ու տեղադրում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում կանգառների պատրաստման ու տեղադրման արդյունքում՝ հասարակական տրանսպորտին սպասելու ընթացքում, բնակչության բոլոր շերտերը՝ այդ թվում նաև հաշմանդամները կանգառներում կարող են պաշտպանվել արևից, անձրևից և մասամբ էլ ցրտից, կարող են տեղեկատվություն ստանալ երթևեկության ժամերի մասին.						

Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	500 000	500 000	500 000	500 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	200 000	200 000	200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	300 000	300 000	300 000	300 000

Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձյութի, մանրախճի, ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում, ամրացում
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2 000 000 դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա
Ծրագրի հիմնական ռիսկերը	Աջակցություն համայնքի նոր թաղամասերի գազաֆիկացմանը
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի նոր թաղամասերի 1,2,3,4,5,6-րդ փողոցների գազիֆիկացման արդյունքում նորաստեղծ երկու թաղամասերում նորակառույց անհատական տները կգազաֆիկացվեն, նորմալ հունով կգնա տների լոկալ ջեռուցման անցկացման հարցերը, կբարելավվի կենցաղային պայմանները, կբարձրանա բնակչության կենցաղային հարցերի կարգավորման նկատմամբ բավարարվածությունը և տրամադրությունը.

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 4

«Աջակցություն ոռոգման ջրատարի վերանորոգմանը»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն ոռոգման ջրատարի վերանորոգման						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	100000	100000	100000	150000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	50000	50000	50000	100 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	50000	50000	50000	50000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Տեխնիկայի վարձակալում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 450 000 դրամ						

	Ընդհանուր բյուջեն՝ 450 000 դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ նյութեր և տեխնիկա
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ոռոգման ջրատարի վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային հողային հունով ոռոգման ջրատարի վերանորոգման արդյունքում ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա մշակաբույսերի բերքատվությունը:

4.ՀՀՀՕ ֆինանսավորում

Համայնքի 2016թ. տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները հաշվարկել է 11244.9 ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ՝ սեփական եկամուտները 1731.2 ՀՀ դրամ կամ 15.4%: -այս հատվածը տանել 2.2-ի սկիզբ

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքում ունի հետևյալ պատկերը.

հ/հ	Եկամուտների տեսակը	2016 փաստացի	2017 նախատեսված	2018 նախատեսված	2019 նախատեսված	2020 նախատեսված	2021 նախատեսված
1.	Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	9513.7	9960.1	10160.0	10450.0	10800.0	11000.0
2	Եկամուտներ	1322.4	1731.5	1731.5	1731.5	1731.5	1731.5
2.1	Ընթացիկ եկամուտներ	-	-	-	-	-	
1.	Հարկային եկամուտներ	971.0	1175.5	1175.5	1175.5	1175.5	1175.5
1.1	Հողի հարկ	410.7	655.5	655.5	655.5	655.5	655.5
1.2	Գույքահարկ	507.5	470.0	470.0	470.0	470.0	470.0
1.3	Եկամտահարկ	-	-	-	-	-	-
1.4	Այլ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-
2	Տուրքեր	-	-	-	-	-	-
2.1	Պետական տուրքեր	-	-	-	-	-	-
2.2	Տեղական տուրքեր	52.8	50.0	50.0	50.0	50.0	50.0
3	Ոչ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-

3.1	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ	90.7	196.0	196.0	196.0	196.0	196.0
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ	-	-	-	-	-	-
3.3	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	-	-	-	-	-	-
3.4	Ծառայությունների մատուցումից	260.7	360.0	360.0	360.0	360.0	360.0
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-

5. ՀՀԶԾ մոնիտորինգ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Մոնիթորինգն, առաջին հերթին, անհրաժեշտ է համայնքի ղեկավարությունը, որպեսզի հնարավոր լինի ձեռքը պահել Ծրագրի «զարկերակի» վրա:

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՎՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ծրագիր 1

Համայնքի ներքին փողոցների գիշերային լուսավորությունների

Լեռնամերձ համայնքի կենտրոնական փողոցը ունի գիշերային լուսավորություն, որը իրականացրել են բարեգործները, սակայն համայնքի մյուս փողոցները նույնպես ունեն լուսավորության կարիք, որովհետև չունեն ասվալտե ծածկույթ, իսկ անձրևի և ձյան ժամանակ ցեխի պատճառով բնակչության համար դառնում է դժվարանցանելի:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Համայնքի բնակիչների համար ապահովել լուսավոր և անվտանգ ճանապարհով:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացման համար ամբողջ գումարը կտրամադրի համայնքապետարանի միջոցներով:

Ծրագիր 2

Համայնքի ոռոգման ջրատարի վերանորգում

Համայնք մտնող ջրատարը նորոգվել է սակայն իրականացնող ընկերությունը նորագումը կատարել է թերությունների և նախատեսված քանակի կեսից քիչ է ջուր մտնում համայնք:

Ծրագրի նպատակն և խնդիրները
Համայնքի բնակչությանը ապահով ոռոգման ջրով, գյուղատնտեսությամբ զբաղվելու համար:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Համայնքի ներքին ջրատարը վերանորոգելու համար համայնքը պատրաստ է ներդնել գումարի 20%, ուստի պետք է դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ բարեգործների որոնք կարող են ներդրումներ կատարեն համայնքում:

Ծրագիր 3

Գյուղտեխնիկայի ձեռք բերում

Լեռնամեռձ համայնքում գյուղատնտեսությունը խթանելու համար հարկավոր է համայնքն ունենա գյուղտեխնիկա:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Համայնքի բնակիչների համար գյուղտեխնիկայի ծառայությունը դարձնել ավելի մատչելի::

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Գյուղտեխնիկա ձեռք բերելու համար համայնքը պատրաստ է ներդնել գումարի 20%, ուստի պետք է դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ բարեգործների որոնք կարող են ներդրումներ կատարեն համայնքում:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2017թ. փաստ.	2018թ. փաստ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	1	2	5	6			
1	Համայնքի տարածքը	հա	166.3	166.3	166.3	166.3	166.3
2	Բնակչության թիվ	մարդ	519	520	521	521	522
3	Ծնունդը	մարդ	5	6	5	5	6
4	Մահացությունը	մարդ	2	2	2	2	2
5	Աշխ. ռեսուրսները, այդ թվում	մարդ	291	292	292	290	293
	ա) զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ	270	273	271	275	272
6	Գործազրկության մակարդակը	%	10	9	8	7	6
7	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	1	1	1	1	1
8	Պահուստային հողեր	հա	1.1	1.1	1.1	1.1	1.1
9	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	100	100	100	100	100
10	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	2.9	2.9	2.9	2.9	2.9
11	Ներհամայնքային ոռոգման ցանցի	կմ	11	11	11	11	11

	երկարությունը						
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	105	105	105	105	105
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	6	6	6	6	6
14	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	3	3	2	1	1
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հզ.քմ	15400	15400	15400	15400	15400
16	Բնակկարիքավոր ընտանիքների թիվ	հատ	15	14	13	10	8
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	20	20	20	20	20
18	Ջրի կորուստները ցանցում	%	8	7	6	5	4
19	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	26	27	27	28	30
20	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	_	-	-	-	-
21	Գյուղապետարանի և ենթակառուց- վածքների աշխատողների թիվը	մարդ	7	7	7	8	8

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը 101
   այդ թվում՝
   ա. անհատական տնտեսություն-101
   բ. կոլեկտիվ տնտեսություն -0
   գ. պետական տնտեսություն-0

2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը. ց
   ա. ցորեն 498
   բ. գարի 0
   գ. կարտոֆիլ 450
   դ. կաղամբ 750
   ե. բանջարաբույս կուլտ. 16110
   զ. կաթ 145700 լ
   է. միս 55
   ը. ձու 115000 հատ
3. Ցանքատարածություններ
   ա. հացահատիկ 10.6 հա
   բ. կարտոֆիլ 1.5 հա
   գ. բանջարաբույս կուլտ. 45 հա
   դ. կաղամբ 2.5 հա
   ե. առվույտ 16.7 հա
4. Անասնագլխաքանակը, հատ

ա. խոշոր եղջեր. անասուններ 176
այդ թվում՝ կովեր 74
բ. մանր եղջեր. անասուններ 670
այդ թվում՝ մայրեր 525
գ. խոզեր 22
այդ թվում՝ մայրեր 2
դ. թռչուններ՝ 805
այդ թվում հավեր՝ 580

5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը. հատ
այդ թվում՝

ա. համայնքային սեփականություն	բ. մասնավոր սեփականություն
թրթուրավոր տրակտորներ---0	թրթուրավոր տրակտորներ
անիվավոր տրակտորներ---0	անիվավոր տրակտորներ 2
հացահատրկային կոմբայն- 0	հացահատրկային կոմբայն-
խոտհնձիչ կոմբայն----------0	խոտհնձիչ կոմբայն -0
բեռն. ավտո. տարբեր մակնիշի 0	բեռն. ավտո. տարբեր - մակնիշի 1
տրակտորային կցասայլեր	տրակտորային կցասայլեր 1
գութաններ----------0	գութաններ 1
կուլտիվատորներ-----0--	կուլտիվատորներ 1
շարքացաններ------ 0	շարքացաններ 0
խոտ հակավորող	խոտ հակավորող
մեքենաներ 0	մեքենաներ 0
պարարտայնուք ցրիչ 0	պարարտայնուք ցրիչ 0
հատիկաղաց 0	հատիկաղաց 0

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ
2. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ
3. Ներտնտեսային փողոցներ և ճանապարհներ
4. Հուշարձան
5. Գերեզմանատուն